
ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՄԵՇ ԵՂԵՆՆԻ 94-ԱՍՅԱԿԻՆ

**ՀԱՅԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈԼՈՎՅՈՎԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ս. Ա. ԶԱԶԱՐՅԱՆ

*“Лучше отказаться от патриотизма,
чем от совести”.*

Вл. С. Соловьев

XIX դարի ռուս փիլիսոփայության խոշորագույն դեմքերից մեկի՝ Վլադիմիր Սոլովյովի¹ ստեղծագործություններում կարևոր տեղ է զբաղեցնում ազգային թեմատիկան: Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ փիլիսոփայական էություն, առեղծվածային ու խորհրդավոր անձնավորության համարում ունեցող և փիլիսոփայական, միստիկական ու կրոնաստվածաբանական նրբագույն հարցերի մեջ խորասուզված իմաստասերը անդրադառնում է կենսական-գործնական խնդիրներին: Սակայն այստեղ զարմանալի կամ տարօրինակ ոչինչ չկա. իսկապես, Սոլովյովը բառիս բուն իմաստով փիլիսոփա էր, պոետ, մարգարե, սակայն կաթինետային մտածող չէր: Նա փիլիսոփայի առաքելությունը տեսնում էր ոչ միայն տեսական գործունեության, այլև կյանքի տարբեր ոլորտներում փիլիսոփայական ու բարոյական չափանիշների պահպանման և կիրառման մեջ: Սոլովյովը, որն իր «**Փիլիսոփայության պատմական գործերը**» հոդվածում հրաշալի կերպով ցույց է տվել, թե փիլիսոփայությունն ինչպիսի ազդեցություն է ունեցել մարդկային պատմության ընթացքի վրա և ինչ դեր է խաղացել հասարակության զարգացման գործում, չէր կարող անտարբեր անցնել այն հարցերի կողքով, որոնք կենսական նշանակություն ունեին ինչպես առանձին մարդկանց ու ժողովուրդների, այնպես էլ առհասարակ մարդկության համար:

¹ **Վլ. Ս. Սոլովյովը** (1853-1900) ծնվել է նշանավոր պատմաբան Ս. Մ. Սոլովյովի ընտանիքում, սովորել է Մոսկվայի համալսարանում, 1874 թ. պաշտպանել է «Արևմտյան փիլիսոփայության ճգնաժամը (ընդդեմ պոզիտիվիստների)» մագիստրոսական թեզը, իսկ 1880 թ.՝ «Վերացական սկիզբների քննադատություն» դոկտորական թեզը: 1880-ական թթ. զբաղվում է հիմնականում կրոնափիլիսոփայական հարցերով, հրատարակում «Կյանքի հոգևոր հիմքերը», «Ընթերցումներ աստվածամարդկության մասին», «Ռուսիան և տիեզերական եկեղեցին», «Ռուսական գաղափարը» և այլ աշխատություններ, որոնցում առաջադրում է ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիների միավորման գաղափարը: 1890-ական թվականներին կրկին անդրադառնում է փիլիսոփայությանը, հրատարակում «Բարու արդարացումը: Բարոյական փիլիսոփայություն» գլուխգործոց աշխատությունը, ինչպես նաև փիլիսոփայական բնույթի տարբեր երկեր, հոդվածներ՝ գրված Բրոկհաուզի և Եֆրոնի հանրագիտարանի համար (տե՛ս “Философский словарь Вл. Соловьева”. Ростов н/Д. 1997): Վլ. Սոլովյովի կյանքի, գործունեության և փիլիսոփայական հայացքների մասին տե՛ս **А. Ф. Лосев**, Вл. Соловьев и его время. М., 1990, **В. В. Зеньковский**, История русской философии, т. 1, кн. 2, Л., 1991, с. 7-71:

Ազգային, իսկ ավելի ընդհանուր՝ մարդկության պատմական ճակատագրի հարցը Սոլովյովի «համամիասնական փիլիսոփայության» բաղկացուցիչ մասերից է, սակայն նա չի բավարարվել միայն դրա մետաֆիզիկական կողմերի քննարկումներով: Մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ իր ապրած ժամանակաշրջանում մեծ տերությունների վարած շովինիստական քաղաքականության կամ «միջազգային մարդակերության» փաստերը, ռուսական ազգայնամոլության սաստակացումը, հակահրեական ու հակալեհական շարժումները, բուլղարական ու հայկական ջարդերը և այլն, պայմանավորեցին նրա հետաքրքրությունը ազգային հարցերի հանդեպ:

1880-90-ական թվականներին նա հրապարակում է «**Ազգային հարցը Ռուսաստանում**» հոդվածաշարը, որտեղ դիտարկում է Եվրոպա-Ռուսաստան, Արևելք-Ռուսաստան, ռուս-լեհական, ռուս-հրեական փոխհարաբերություններին, սլավոնասիրությանը, Ռուսաստանի և եվրոպական տերությունների ազգային քաղաքականությանն առնչվող բազմաբնույթ հարցեր: Այդ աշխատությունը, Վ. Ֆ. Ասմուսի գնահատմամբ, «մինչև այսօր մնում է որպես նացիոնալիզմի, նացիոնալիստական շովինիզմի և նացիոնալիստական անհանդուրժողականության դեմ ուղղված լավագույն երկերից մեկը»²: Իհարկե, Սոլովյովը՝ իբրև ռուս մտածող, ազգային հարցը նախ և առաջ դիտարկում է որպես ռուս ժողովրդի համաշխարհային-պատմական առաքելության և բարոյական արժանապատվության հարց, այնուհետև՝ Ռուսաստանում ապրող էթնիկ փոքրամասնությունների, ազգությունների ու ազգերի (հատկապես հրեաների և լեհերի) նկատմամբ վերաբերմունքի հարց: Նրա կարծիքով, ազգային հարցը շատ ժողովուրդների համար նախ և առաջ **գոյության** հարց է: Ռուսաստանում այդ հարցը լուծված է, հետևաբար այստեղ օրակարգում տարբեր ժողովուրդների **արժանապատիվ գոյության** խնդիրն է³:

Սոլովյովը ազգային հիմնախնդիրներին մոտենում է նախ և առաջ որպես փիլիսոփա-բարոյագետ: Նրա «**Բարու արդարացումը**» աշխատության մեջ գետեղված է մի գլուխ՝ «Ազգային հարցը բարոյականության տեսանկյունից» վերնագրով, որում դիտարկվում են **ազգային շահ, ազգային իղեայ, հայրենասիրություն, ազգայնականություն, նացիոնալիզմ, կոմունալիզիզմ, բարոյական խիղճ** և այլ հասկացություններ:

Սոլովյովի ազգային հարցի «փիլիսոփայությունը» խարսխվում է հետևյալ գաղափարների վրա: Քաղաքականությունը և բարոյականությունը իրար չեն համընկնում, սակայն սերտորեն կապված են միմյանց հետ: Մեծագույն մոլորություն և չարիք է, երբ դրանք իրարից սահմանազատում են: Քաղաքականությունը չի կարող և չպետք է լինի ինքնանպատակ. դրա բարձրագույն խնդիրը բարոյական իղեալների իրականացումն է: Մարդը կամ առանձին ազգը գոյում է արժանապատվորեն, երբ իր կյանքը և գործողությունները ենթարկում է բարոյական օրենքին և դրանք ուղղորդում է անպայմանական բարոյական նպատակների իրագործմանը: Յուրաքանչյուր

² **В. Ф. Асмус.** Владимир Сергеевич Соловьев. В кн.: **В. С. Соловьев.** Сочинения в двух томах. Т.1. М., 1989, с. 8.

³ Տե՛ս **В. С. Соловьев,** Национальный вопрос в России. Выпуск первый. // Сочинения в двух томах, т. 1, М., 1989, էջ 264:

մարդ, գրում է նա, ունի նյութական շահեր ու հետաքրքրություններ, բայց նաև՝ պատասխանատվություններ կամ բարոյական հետաքրքրություններ: Եթե մարդը արհամարհում է բարոյական շահերը և միայն մտածում իր նյութական շահերի մասին, ապա բարոյականության տեսանկյունից նա արժանի է դատապարտման: Նույնը վերաբերում է ժողովուրդներին, որոնք ունեն իրենց շահերը, բայց նաև՝ խիղճ, բարոյական պարտք առ մարդկություն: Եվ եթե այդ խիղճը թույլ է դրսևորվում քաղաքականության մեջ և թույլ է զսպում ազգային եսասիրության դրսևորումները, ապա դա աննորմալ, հիվանդագին երևույթ է: «Միջազգային մարդակերությունը», մի ազգի կողմից մյուսին ճնշելու, շահագործելու, կոտորելու քաղաքականությունը, արդարացվեն թե չարդարացվեն ազգային շահերի ու իդեալների տեսանկյունից, անմարդկային ու հակաբարոյական երևույթներ են: Ըստ տարածված տեսակետի, գրում է Մոլոյովը, յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ունենա իր քաղաքականությունը, որի նպատակն է պաշտպանել բացառապես սեփական ժողովրդի կամ պետության շահերը: Դրա մեջ կարծես թե վատ բան չկա, սակայն անորոշ է մնում «ազգային շահ» արտահայտության բովանդակությունը: Եթե դրա տակ հասկացվում է միայն տվյալ ժողովրդի կամ պետության հզորության ու բարեկեցության գաղափարը, ապա հանուն դրա կարող են կատարվել տարբեր բնույթի չարագործություններ: Այլ խոսքով, կատարելապես անհնար է հստակորեն որոշել սեփական շահերի սահմանը: Օրինակ, Անգլիան, հետամուտ իր ազգային շահերին, թալանում է Եգիպտոսը, թմրանյութով թունավորում չին ժողովրդին, ճնշում ու ստորացնում հնդիկներին և այլն:

Մոլոյովը նշում է, որ ազգայնականությունը պետք է տարբերել ազգայնամոլությունից (նացիոնալիզմից): Ազգայնականությունը դրական ուժ է, և յուրաքանչյուր ժողովուրդ ունի որոշակի առաքելություն՝ պահպանելու և զարգացնելու իր ազգային ինքնությունը: Մարդկությունը մի ամբողջական մարմին է, իսկ առանձին ազգերը՝ այդ մարմնի օրգանական մասերը: Մասը կարող է հակադրվել ամբողջին, եթե ձգտում է մեկուսանալ, մտածել միայն սեփական շահերի մասին, իր շահերը գերադասել մյուսներից: Այս պարագայում ազգայնականության դրական ուժը կարող է վերածվել նացիոնալիզմի բացասական ջանքի: Եթե քրիստոնեական ազգերն են առաջնորդվում այդ սկզբունքով, ապա դա նշանակում է, որ նրանք վերադառնում են «բնական մարդու» վիճակին: Հանուն սեփական շահերի ուրիշներին ճնշելը, ոչնչացնելը կենդանական բնագոյի դրսևորում է, անաստվածային ու անմարդկային գործ: Եթե ազգային զգացմունքի զարթոնքը ուղեկցվում է անսահման ինքնահավանությամբ ու ինքնաբավությամբ, բութ ատելությամբ և կույր թշնամանքով ուրիշների հանդեպ, եթե պատմական տարբերությունը ընդունվում է որպես իդեալ, և փաստացի տարանջատումը դիտվում է որպես սկզբունք, եթե յուրաքանչյուր ազգ ուրիշներին համարում է հավերժական թշնամիներ ու մրցակիցներ կամ՝ որպես առվակներ, որոնք պետք է տարրալուծվեն իրենց ծովի մեջ, եթե, այլ խոսքով, ազգային զգացմունքը պետք է դրսևորվի միայն ազգային եսապաշտության տեսքով, ապա, անկասկած, դա ոչ մի ընդհանուր բան չի կարող ունենալ քրիստոնեական գաղափարախոսության ու բարոյականության հետ: Դա կնշանակի հրաժարում քրիստոնեությունից և վերադարձ հեթանոսությանն ու հինկտա-

կարանային պարտիկուլյարիզմին: Եվ եթե այդպիսի ազգային էգոիզմին է վիճակված գերիշխել մարդկության մեջ, ապա համաշխարհային պատմությունը կկորցնի իր իմաստն ու նշանակությունը: Ըստ Սոլովյովի՝ քրիստոնեության պատմական առաքելությունն է առանձին մարդու մեջ հաստատելու աստվածային թագավորությունը, իսկ քրիստոնեական պետությունների վարած քաղաքականությունը պետք է լինի աստվածային թագավորության գալուստի նախապատրաստումը: Հետևաբար, եթե քրիստոնեական պետությունների քաղաքականությունը պիտի հիմնվի ազգային նացիոնալիզմի սկզբունքի վրա, ապա քրիստոնեական կրոնի առաջացումը կկորցնի իր իմաստը:

Սոլովյովը իրեն համարում է ազգայնամոլության (նացիոնալիզմի) վճռական հակառակորդ: Հպարտանալ սեփական բացառիկությամբ, իրեն վերապահել առանձնահատուկ իրավունքներ և այլն, ինքնահաստատման անհաջող ձև է: Իսկ ընդունել իր պարտքը, ճանաչել իր պատասխանատվությունը՝ բարոյական սխրանքի և ճշմարիտ աստվածամարդկային կյանքի սկիզբն է: Այս պարագայում խիղճն է դառնում չափանիշ: Ուժեղ ազգերը ոչ թե պետք է ճնշեն թույլերին, այլ **ծառայեն** մարդկությանը: Իսկական ազգայնականությունը մտածում է ոչ միայն իր ազգի շահի, այլև մարդկության առջև իր բարոյական պարտքի ու պատասխանատվության մասին: Բարձրագույն բարոյական իդեալը պահանջում է, որ մենք սիրենք բոլոր ազգերին, բոլոր ժողովուրդներին, ինչպես մեր սեփական ժողովրդին: «Եթե այդպիսի վերաբերմունքը դառնա իրական կանոն, ապա ազգային **փարբերությունները** կպահպանվեն և նույնիսկ կուժեղանան, կդառնան ավելի արտահայտիչ, և կվերանան միայն թշնամական **բաժանումներն** ու վիրավորանքները, որոնք մարդկության բարոյական կազմակերպման գլխավոր խոչընդոտներն են: Այլ ժողովրդներին ինչպես սեփականին սիրելու պահանջը բնավ չի նշանակում զգացմունքի **հոգեբանական նույնականություն**, այլ միայն կամային վերաբերմունքի **բարոյական հավասարություն**: Ես պետք է նույնչափ ճշմարիտ բարիք ցանկանամ բոլոր մյուս ժողովուրդներին, ինչպես իմ ժողովրդին. այդ «բարիկամեցողական սերը» միանման է թեկուզև այն պատճառով, ճշմարիտ բարիքը միասնական է և անբաժանելի»⁴:

Ահավասիկ, այս փիլիսոփայության համատեքստում պետք է դիտարկել Հայկական հարցի վերաբերյալ ռուս մտածողի անդրադարձները: Սոլովյովը ռուս այն մտածողներից ու գործիչներից էր, որոնք դատապարտել են Արևմտյան Հայաստանում հայերի հանդեպ թուրքերի կատարած ոճրագործությունները: Դրա վկայություններից է այն, որ նա առանց երկմտելու հողված է տրամադրել բարեգործական նպատակով հրատարկվող «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի համար⁵: Այդ ժողովածուում զետեղված «Նամակ Արևելյան հարցի մասին» հողվածում նա, նկատի ունենալով 1894-96 թթ. հայկական կոտորածները և

⁴ **В. С. Соловьев**, Оправдание добра. Нравственная философия // Сочинения в двух томах. Т. 2. М., 1990. с. 378.

⁵ Տե՛ս **В. С. Соловьев**, Письмо о Восточном вопросе, в кн.: “Братская помощь пострадавшим в Турции армянам”, 2-е изд., М., 1898, էջ 158 -159:

քննադատելով Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, նշում է, որ «մարդկային աղետների աննախադեպ կուտակումը չլուծվեց ոչ մի պատմական հարվածով»⁶:

Սուրվյոլը հայկական թեմատիկային ըստ էության անդրադառնում է **«Երեք գրույց պատերազմի, առաջընթացի և համաշխարհային պատմության վախճանի մասին»** աշխատության մեջ: Դա ռուս մտածողի վերջին ստեղծագործությունն էր, որում ի մի են բերված նրա պատմափիլիսոփայական ու բարոյագիտական ըմբռնումները: Առաջին գրույցում քննարկվում են բարու և չարի, երկրորդում՝ քաղաքակրթության զարգացման միտումների, իսկ երրորդում՝ հակաքրիստոսի երևույթի կամ պատմության վախճանի հարցերը: Հայկական թեմատիկան արծարծվում է առաջին և երկրորդ գրույցներում: Դրանցում օգտագործված նյութերից կարելի է եզրակացնել, որ Սուրվյոլը ամենայն ուշադրությամբ հետևում էր հայերի, հայկական կոտորածների մասին ռուսական մամուլում տպագրվող հաղորդագրություններին ու հոդվածներին: Նշենք, որ այդ աշխատության մեջ քննարկված հարցերն այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը, դրանք հետաքրքիր են ոչ միայն պատմական, այլև արդիական առումներով: Բացի փիլիսոփայական ու բարոյագիտական հարցադրումներից, դրանում բարձրացվում են հետևյալ հարցերը. որո՞նք են հայկական կոտորածների պատճառները, ովքե՞ր են մեղավորները և պատասխանատուները, ինչպե՞ս պետք է լուծվի էթնիկական փոքրամասնությունների (քրիստոնյաների) հարցը Թուրքիայում, թուրքը կարո՞ղ է քաղաքակրթվել ու եվրոպականանալ և այլն: Ի դեպ, սրանք այն հարցերից են, որոնք բուռն կերպով քննարկվել են նաև XIX դարավերջերի և XX դարի հայ փիլիսոփայական ու քաղաքագիտական գրականության մեջ և այսօր էլ մնում են վիճահարույց:

Զրուցակիցները, թվով հինգ հոգի (գեներալը, քաղաքական գործիչը, երիտասարդ իշխան, ոմն տիկին և պարոն Ջ-ն), քննարկում են պատերազմի, բարու և չարի հետ կապված հարցեր: Երիտասարդ իշխանը, որը պաշտպանում է տոլստոյականության գաղափարները, ցանկացած պատերազմ դիտում է որպես մարդասպանության ձև, ուստի այն առանց վերապահումների դատապարտում է: Ըստ նրա, սպանությունը չարիք է, Աստծո կամքին հակառակ երևույթ, աստվածային պատվիրանով արգելված, ուստի ինչ ձևով էլ այն հանդես գա, պետք է դիտել չարիք: Չսպանելն առաջին հերթին անձնական խղճի հարց է: Բարոյական գիտակցություն ունեցող մարդը ոչ մի դեպքում չպետք է չարիք գործի: Երիտասարդ իշխանի տեսակետին հատկապես հակադրվում է գեներալը, որը ներկայացնում է ռուսական զինվորականության տեսակետը: Բնութագրելով ինքն իրեն՝ գեներալը ասում է, որ եթե գործը վերաբերում է անձնական խղճին, ապա ինքը բարոյական տեսակետից միջին մի մարդ է՝ ոչ սպիտակ է, ոչ սև: Այսինքն՝ աչքի չի ընկնել ոչ առաքինությամբ, ոչ էլ չարագործությամբ: Բայց իր կյանքում եղել է մի դեպք, երբ իր մեջ զգացել է բարի ուժի գերիշխանությունը: Կատարված գործից բարոյական լիաթոք բավարարվածություն է զգացել և գործել է առանց կասկածելու: Իսկ այդ եզակի բարի գործը

⁶ В. С. Соловьев, Сочинения в двух томах. Т. 2, с. 636.

սպանություն էր, ընդ որում, ոչ թե մեկի, այլ մի քանի հազարի: Գեներալը պատմում է, որ 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ինքը կռվում էր Կովկասյան ճակատում: Ալաջայի բարձունքներում թուրքերին ջախջախելուց հետո իր հետախուզական ջոկատը սկսում է հետապնդել թշնամուն: Ծանապարհին ականատես են դառնում տխուր պատկերների՝ վառված գյուղեր, ավերված տներ, փչացրած արտեր և այլն: Լեռներից հովիտ իջնելիս, ըստ քարտեզի, պետք է մտնեին հայկական մի գյուղ: Սակայն ոչ մի գյուղ այլևս չկար: Ավերված գյուղ մտնելիս առաջապահ կազակները ցնցված կանգ առան: Սարսափելի տեսարան էր. ըստ երևույթին հայերը չէին հասցրել փախչել: Բաշիբոզուկները բոլորին կապել էին սայլերին և կրակի տվել: Սայլերի կողքին կանանց դիակներ էին՝ կտրտված կրծքերով, պատռված փորերով: Հնարավոր չէ բոլոր մանրամասները նկարագրել: Սակայն մի բան մինչև հիմա էլ, պատմում է գեներալը, աչքերիս առաջ է. գետնին փռված էր մի կին, վիզը և ուտերը այնպես ամուր կապված գերանին, որ չկարողանա թեքվել, իսկ նրա դիմաց ձողին կապկպված էր մի փոքրիկ տղա՝ աչքերը չոված ու ամբողջությամբ սևացած, ամենայն հավանականությամբ՝ այդ կնոջ որդին, իսկ տղայի ոտքերի տակ թափված էին դեռևս բոցկլտացող ամուխներ: Մահացու թախիծը պարուրեց ինձ, պատմում է գեներալը, աստծո աշխարհը ինձ զգվելի թվաց, սկսեցի գործել մեխանիկորեն՝ անպայման վրեժխնդիր լինելու վճռականությամբ⁷: Ռուսները մտնում են ավերված հայկական գյուղը: Ջրհորում թաքնված մի հայ, որ հարևան գյուղից էր, հայտնում է, որ մի քանի ժամ առաջ թուրքերը հեռացել են դեպի իրենց գյուղը: Նա ցույց է տալիս իրենց գյուղ տանող կարճ ճանապարհը: «Առանց հասպաղելու հրամայեցի առաջ ընթանալ: Հոգիս մեկեն պայծառացավ, - ասում է գեներալը, - կարծես թե թևերով էի թռչում. գիտեի, թե **ինչ** պետք է անել, և զգում էի, որ **արվելու է**»: Շուտով կիրճում կազակները

⁷ Նման մի պատմություն, բուլղարական կոտորածների կապակցությամբ Ֆ. Դոստոևսկին ներկայացնում է «Կարամազով եղբայրներ» վեպում և ամում հետևյալ եզրակացությունը. *«Իրոք, երբեմն խոսում են մարդու «գազանային» դաժանությունների մասին, բայց դա սոսկալի անարդարություն ու վիրավորանք է գազանների նկատմամբ. գազանը երբեք չի կարող այնքան դաժան լինել, որքան մարդը, այնպես արդիսարար, այնպես գեղարվեստորեն դաժան: Վազրը պարզապես հոշոտում է, պատրաստում, և այդ միայն կարող է անել: Նրա մրդությունն անգամ չէր անցնի մարդկանց ականջները զամել ցանկապարհի և ամբողջ գիշեր թողնել այդպես, եթե նույնիսկ ի վիճակի լինեիր անելու այդ բանը: Իսկ այդ թուրքերը, ի միջի այլոց, հեշտասիրությամբ փանջել են նաև երեխաներին, մոր արգանդից դաշույնով կտրել-հանելուց սկսած մինչև ծծկեր երեխաներին վեր նետելը և ալիևի ծայրով բռնելը՝ այն էլ մոր աչքերի առաջ: Հենց բուն հեշտանքն էլ մոր աչքերի առաջ անելն էր: Բայց սհա այդպիսի մի փեսարան հարկապես հեղաբրբրել է ինչ: Պարկերացրու. ծծկեր մանկիկը՝ դողահար մոր ձեռքերին, շուրջը՝ ներխուժած թուրքեր: Նրանք մի զվարճալի խաղ են սկսել. փայփայում են փոքրիկին, ծիծաղում են, որպեսզի նրան էլ ծիծաղեցնեն, և հաջողում են, մանկիկը ծիծաղում է: Այդ թուրքերն էր թուրքը նրա վրա արձանանակ է ուղղում՝ դեմքից չորս մատնաչափ հեռավորությամբ: Մանկիկը ուրախ ծլվլում է, թաթիկները երկարում, որ բռնի արձանանակը, և արդիսար հանկարծ չոթացնում է բլթակը ուղիղ նրա երեսին, ջախջախում նրա գլխիկը... Արվեստ է, այնպես չէ՞: Ի դեպ, ասում են, որ թուրքերը քաղցրավենիք շար են սիրում»// Ֆ. Մ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, հ. 1, Եր., 1983, էջ 337-338:*

հանդիպեցին բաշխողներին՝ «անուղեղ սատանաներին», որոնք սկսեցին կրակել կազակների վրա: Գեներալը հրամայում է կեղծ հարձակում սկսել, հետո՝ նահանջել, իսկ մինչ այդ մարտական պատրաստության է բերվում լեռնային հրետանին: «Անհամբերությունից դողում էի. աչքերիս առջև չոված աչքերով խանձված տղան էր»: Թուրքերը սկսեցին հետապնդել նահանջողներին. և այստեղ սկսեց գործել ռուսական հրետանին: Հասավ Աստծո կամքի ժամը: Վեց կրակահերթերից հետո «անուղեղ սատանաների» ռեզերվը գրեթե ամբողջությամբ ոչնչացվեց: «Հոգուս մեջ լուսե Քրիստոսի Հարությունն էր, Տոն, դրախտային մի վիճակ՝ զգում էի միայն Աստծուն: Մերոնցից 37 մարդ իրենց հոգին տվեցին Աստծուն: Այնքան մաքուր էր հոգիս այդ գործում, որ հիմա էլ ամբողջ հոգով ափսոսում եմ, որ վերջին կրակահերթից հետո ես չմեռա: Ոչ մի կասկած չունեի, որ եթե մեռնեի, իմ սպանված 37 կազակների հետ կներկայանայի Աստծուն, և դրախտում տեղ կգտնեի՝ աստվածաշնչյան բարի ավազակների (խոսքը Քրիստոսի հետ խաչված երկու ավազակների մասին է - Ս. Չ.) կողքին»⁸:

Երկրորդ գրույցի ընթացքում քննարկվում են պատերազմների և մարդկության առաջընթացին վերաբերող հարցեր: Այստեղ «գլխավոր հերոսի» դերում հանդես է գալիս քաղաքական գործիչը, որը փորձում է քաղաքական անցուղարձին մոտենալ ողջախոհության, քաղաքական գործնապաշտության դիրքերից: «Ես պնդում եմ, որ ներկայումս պատերազմը անօգուտ է, և գեներալի երեկվա պատմությունը դրա վառ վկայությունն է: Ես հասկանում եմ, որ ծառայական պարտքի բերումով դառնալով պատերազմի գործուն մասնակից և բախվելով թուրքական անկանոն գործի հետ, որը վրդովեցուցիչ գազանություն էր կատարել խաղաղ բնակչության հանդեպ, յուրաքանչյուր... (նայում է իշխանի կողմը), յուրաքանչյուր մարդ, որ ազատ է կանխադրված «բացարձակ սկզբունքներից», պարտավոր է թե ըստ զգացմունքի և թե ըստ պատասխանատվության անխնա ոչնչացնել նրանց, ինչպես գեներալը դա արեց, և ոչ թե մտածել նրանց բարոյական վերածննդի մասին, ինչպես ասում է իշխանը»⁹:

Այնուհետև քաղաքական գործիչը բարձրացնում է հետևյալ հարցերը. ովքե՞ր են այդ կոտորածների իսկական մեղավորները, և ի՞նչ ձեռք բերվեց պատերազմի միջոցով: Առաջին հարցի հետ կապված նա նշում է, որ այդ կոտորածների պատճառներից մեկը Ռուսաստանի ռազմատենչ ու նվաճողական քաղաքականությունն էր, որ գրգռեց-բորբոքեց թուրքական վերնախավին: Չե՞ որ բուլղարներին սկսեցին կոտորել այն բանից հետո, ասում է նա, երբ Բուլղարիան լցվեց հեղափոխական կոմիտեներով, և թուրքերը սկսեցին վախենալ արտաքին միջամտությունից և սեփական երկրի անդամահատումից: Նույնը տեղի ունեցավ Հայաստանում, ասում է քաղաքական գործիչը: Իսկ այն հարցը, թե ինչ ստացվեց դրանից... պատասխանը երեկ տվեց գեներալը: «1877 թ. մեր գեներալը ոչնչացնում է մի քանի հազար բաշխողների և դրանով իսկ, մի գուցե, փրկում մի քանի հարյուր հայի: Իսկ 1895 թ. այդ նույն վայրերում բաշխողները արդեն մորթում են ոչ թե հարյուր,

⁸ **В. С. Соловьев**, Три разговора о войне, прогрессе и конце всемирной истории // Сочинения в двух томах. Т. 2, М., 1990, с. 660-664.

⁹ Նույն տեղում, էջ 682:

այլ հազարավոր, գուցե տասնյակ հազարավոր ազգաբնակչություն: Եթե հավատանք տարբեր թղթակիցների (թեև ես խորհուրդ չէի տա դրանց հավատալ), մորթվել է շուրջ կեսմիլիոն մարդ: Իհարկե, դա հեքիաթ է: Սակայն, բոլոր դեպքում, հայկական այդ կոտորածը նախորդ բուլղարականից նշանակալիորեն ավելի մեծ էր: Ահավասիկ մեր հայրենասիրական ու մարդասիրական պատերազմի բարի հետևանքները»¹⁰:

Քաղաքական գործչի կարծիքով հայկական կոտորածները 1877-78 թթ. Ռուսաստանի վարած վատ քաղաքականության հետևանքն էին: 1878թ. Սան-Ստեֆանոյից հետո թուրքերը որոշեցին ամրապնդել իրենց դիրքերը Ասիայում: Բեռլինի կոնգրեսում ստանալով Անգլիայի հովանավորությունը՝ թուրքերը Հայաստանում ուժեղացրին իրենց անկանոն գորքը կամ գեներալի խոսքերով ասած՝ «սատանաներին»: Դա կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ 15 տարի անց Անգլիան Կիպրոսի փոխարեն երաշխավորեց թուրքերի ասիական տարածքների անձեռնմխելիությունը, իսկ անգլիական քաղաքականությունը դրանից հետո դարձավ հակաթուրքական և հայասիրական: Եվ հենց այդ ժամանակ էլ բաշիբոզուկները դարձան իրադրության տերերը... և «քրիստոնեական մսի ամենամեծ պատառը թոցրին»: Գեներալը, որը թուրքական պետության ոչնչացման կողմնակից էր, առարկում է. եթե քաղաքագետներն իրենց գործը այնպես անեին, ինչպես զինվորականներն արեցին, ապա ոչ մի կոտորած էլ չէր լինի: Բոլոր դեպքում, տվյալ հարցում քաղաքագետը իրավացի է այն առումով, որ հայկական կոտորածների գլխավոր պատասխանատուներից են Ռուսաստանը և Անգլիան, որոնք, իրենց զավթողական նպատակներին հետամուտ, շահարկում էին Հայկական հարցը՝ բնավ չմտածելով դրա հետևանքների մասին: Եվրոպացի բազմաթիվ զիտնականներ, նկատում է Ք. Միքայելյանը, ովքեր զբաղվել են Հայկական հարցով, նշում են, որ «Եւրոպան իր վրայ վերցնելով հայերի վիճակը բարոքելու պարտականութիւնը, դրանով Թուրքիայի ամբողջութեան կամ գերիշխանութեան առաջ բացեց երկիւղի մի մեծ դուռ, բայց միաժամանակ ոչ միայն ունէ ազգու քայլ չարաւ յօգուտ հայերի, այլև շնորհիւ իր եսամոլ, նախանձոտ ու ոճրագործ ընթացքին, միանգամայն ապահովեց Մեծ Մարդասպանին՝ իրագործելու հայկական կոտորածների դժոխային ծրագիրը...»¹¹:

Չանգվածային ջարդերը, շարունակում է քաղաքական գործիչը, հեղափոխական քարոզչության հետևանք էին: Ինչո՞ւ թուրքերից պահանջել քրիստոնեական անչարություն և ողորմածություն, եթե դա չի պահանջվում ոչ մի քրիստոնեական ազգից: Նախ, դժվար է ցույց տալ մի պետություն, որը զինված ապստամբությունը չի ճնշել դաժան ու անարդարացի ձևերով: Երկրորդ, այդ ջարդերին իրենք թուրքերը շատ քիչ են մասնակցել՝ հիմնականում գործելով գեներալի «անուղեղ սատանաների» ձեռքերով: Երրորդ, կարելի է համաձայնվել այն մտքի հետ, որ թուրքական կառավարությունն այդ «սատանաներին» ազատություն տալով՝ չափն անցավ, ինչպես Ռուսաստանում ժամանակին Իվան IV-ը:

Քաղաքագետի այն միտքը, որ հեղափոխական շարժումները ինչպես Բալկաններում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում դարձան կոտորածների

¹⁰ Նույն տեղում, էջ 682:

¹¹ Քր. Միքայելյան, Յեղափոխականի մտքերը, Ժընև, 1906, էջ 18-19:

պատճառ, չի համապատասխանում իրականությանը: Թուրքական կառավարությունը վաղօրոք՝ մինչև հեղափոխականների հայտնվելը, մինչև հեղափոխական կուսակցությունների առաջացումը, պատրաստել էր հայ ազգաբնակչության բնաջնջելու ծրագիրը: Մի բարձրաստիճան թուրք պաշտոնյա, խոսելով Հայկական հարցի մասին, ասել է հետևյալը. «Մի խաբիք կառավարության այն անմիտ տեղեկագիրներով, որոնք ճիգ են թափում՝ կոտորածների մեղք հայերի վրայ ձգելու: Կառավարությունը հայերին պատժելու համար մի նախագծած ծրագիր ուներ. սուլթանը զայրացած էր, որ իրեն ստիպում էին ռեֆորմներ տալու և դրա համար ռեֆորմների ծրագիրը ստորագրելուց յետոյ նա հրաման տուց ջարդել հայերին՝ իր գործիքները ցոյց տալու համար»¹²: Այս հարցին ավելի ճիշտ մոտեցում է ցուցաբերել ժամանակի ռուսական ազդեցիկ լրագրերից մեկը, որի «Ակն ընդ սկան» առաջնորդողում կարդում ենք հետևյալը. «...այսպես կոչված «հայ հեղափոխականները» ոչ թե կոսմոպոլիտ-անարխիստներ են, կարգի ու օրինապահության և քաղաքակրթության թշնամիներ, ինչպես կամենում են հավաստիացնել թուրքական կառավարությունը և եվրոպական թուրքամետ մամուլը, այլ մարդիկ, որոնք դաժան վարչակարգի պատճառով հասել են հուսահատության աստիճանի՝ զրկված իրենց ծնողներից, կանանցից ու քույրերից: ...Փոքր Ասիայում 300 հազար հայերի թափված արյունն իրենց հայրենակիցների մեջ ներշնչել է հուսահատություն, քարացրել նրանց զգացմունքներն ու միտքը, և ներկայումս նրանք ծարավի են վրեժխնդրության: Եվ այդ ամենը կատարվեց այն պատճառով, որ Եվրոպան թույլ տվեց սուլթանին՝ XX դարի շեմին ոչնչացնել մի ամբողջ խաղաղ ազգ, միմիայն այն բանի համար, որ այդ ազգը ձգտում էր ձեռք բերել մարդկային տարրական իրավունքներ...»¹³: Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ թուրքերը պետք է իրականացնեին իրենց հայաջինջ ծրագիրը՝ անկախ հեղափոխականների գործունեությունից:

Զրույցին խառնվում է **Տիկիներ**՝ ասելով, որ քաղաքական գործչի հակապատերազմական դատողություններից այդպես էլ ինքը չհասկացավ, թե ինչպես պետք է լուծվեն այնպիսի պատմական հարցեր, ինչպիսին Արևելյանն է: Որքան էլ որ վատ լինեն քրիստոնեական ժողովուրդները Արևելքում, ասում է տիկիներ, եթե նրանք ցանկանում են ապրել ինքնուրույն, իսկ թուրքերը դրա համար նրանց կոտորում են, մի՞թե մենք ձեռքներս ծալած պետք է նայենք: Ենթադրենք, մենք նախորդ պատերազմները լավ քննադատեցինք, այժմ ի՞նչ պետք է անենք, եթե ինչ-որ տեղ այդ ջարդերն սկսվեն:

Քաղաքագետի կարծիքով, քանի դեռ այդ ջարդերը չեն սկսվել, Ռուսաստանը պետք է հրաժարվի անհեռատես, անխոհեմ քաղաքականությունից և հետևի գերմանացիներին, որոնք խաղաղ ճանապարհով փորձում են հասնել այն բանին, ինչ ռուսները պատերազմի միջոցով են ուզում լուծել: **Թե՛ եվրոպացիների և թե՛ թուրքերի համար օգտակար է թուրքերին քաղաքակրթելը**: Հենց Եվրոպայից ու Ռուսաստանից է անմիջականորեն

¹² Նույն տեղում, էջ 28-29:

¹³ Մեջբերումն ըստ՝ Հ. Հովհաննիսյան, 1894-1896 թթ. հայկական կոտորածների բնութագրության հարցի շուրջ, «Հայոց Մեծ եղեռն 90», հոդվածների ժողովածու, Եր., 2005, էջ 202:

կախված, որ թուրքերը շուտափույթ գլխի ընկնեն, որ իրենց երկրի բնակչության կոտորածը ոչ միայն վատ գործ է, այլև, որն ամենակարևորն է, միանգամայն անօգուտ գործ է: Գերմանիան փորձում է քաղաքակրթել Թուրքիային. եթե 1895 թ. նրանք ամուր հաստատված լինեին ասիական Թուրքիայում, ինչպես անգլիացիները՝ Եգիպտոսում, ապա ոչ մի հայկական կոտորածի մասին այսօր չէինք խոսի: Գերմանական քաղաքականությունը կարելի է համարել իմաստուն, ասում է քաղաքական գործիչը, որովհետև դրա հետապնդած նպատակներն ավելի նուրբ են՝ Թուրքիային մտցնել քաղաքակրթ ազգերի շրջանի մեջ, օգնել թուրքերին կրթվելու-փոխվելու և ի վիճակի դառնալու արդարացիորեն ու հումանիստորեն կառավարելու այն ժողովուրդներին, որոնք փոխադարձ թշնամանքի պատճառով չեն կարողանում խաղաղ ձևով կառավարել իրենց գործերը¹⁴:

Տիկինը կտրականապես չի համաձայնվում քաղաքական գործչի դատողությունների հետ. «Դե, դուք արդեն հեքիաթներ եք պատմում: Քրիստոնեական ժողովրդին հավերժ հանձնել թուրքերի կառավարմանը – մի՞թե դա հնարավոր է: Թուրքերը ինձ դուր են գալիս, բայց բոլոր դեպքում նրանք բարբարոսներ են, և նրանց վերջին խոսքը միշտ լինելու է բռնությունը: Իսկ եվրոպական քաղաքակրթությունը նրանց միայն փչացնելու է»¹⁵: Քաղաքական գործչի կարծիքով, Թուրքիայի կերպավորության անհնարիությունը թշնամական նախապաշարում է, որը գերմանացիները իրենց վարած քաղաքականությամբ սկսել են հերքել, ինչպես նրանք ժամանակին նպաստեցին վերացնելու ռուս ժողովրդի բնածին վայրենության մասին նախապաշարումը: Հետաքրքիր է նշել, որ հայ քաղաքական-հասարակական գործիչներից ոմանք նույնպես այն կարծիքին էին, որ թուրքերին քաղաքակրթելու գաղափարը անհեթեթություն է: Օրինակ, Բաֆֆին գրում էր, թե թուրքերը քաղաքակրթվելուց հետո կդառնան «կրթյալ ավագակներ» և էլ ավելի վտանգավոր: Նրանք կհալածեն ու կոչնչացնեն հայերին ավելի խորամանկ ու դաժան եղանակներով: Թուրքական կայսրությունը մի վիթխարի վիշապ է, որ, հիմնված լինելով զինվորական ուժի վրա, կլանում և լափում է իր հպատակ ազգերի աշխատանքի արդյունքները: Ավելին՝ «այդ վիշապը կուլ է տալիս ամբողջ ազգեր ու ժողովուրդներ իր մարմինը պարարտացնելու համար... Մի՞թե երեկվա գազանը կարող է այսօր հրեշտակ դառնալ: Մինչև նրա հրեշտակ դառնալը, Թուրքիայում հայի անունը միայն մնացած կլինի»¹⁶:

Թուրքերի բնութագրման հարցում Տիկնոջ կանացի բնագրը և ինտուիցիան, դժբախտաբար, ավելի ճիշտ էին, քան քաղաքական գործչի «ողջախոհ» դատողությունները թուրքերի քաղաքակրթման ուտոպիական նախագծի մասին: Հետագա իրողությունները ցույց տվեցին, որ «**ամեն դեպքում**» թուրքերը «**բարբարոսներ են, և նրանց վերջին խոսքը միշտ լինելու է բռնությունը**»: XX դարում ո՛չ պատերազմները վերացան, ո՛չ մեծ տերությունների նեղ քաղաքական խաղերը պակասեցին, ո՛չ էլ թուրքերը փոխեցին

¹⁴ Տե՛ս **В. С. Соловьев**, Три разговора о войне, прогрессе и конце всемирной истории, էջ 688:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1964, էջ 272:

իրենց բարբարոս էությունը: Ընդհակառակը, մարդկության պատմության մեջ տեղի ունեցան ամենաարյունոտ պատերազմները և ցեղասպանությունները: Սուրվյոլը ինչ-որ սարսափելի բան կանխագուժում էր. պատահական չէ, որ երրորդ գրույցում նա քննարկում է պատմության վախճանի հարցը: Ամբողջ կյանքում լինելով լավատես, Բարու հաղթանակի ջատագով՝ նա մահացավ որպես հոռետես՝ կասկածներ ունենալով մարդկության զարգացման դրական ընթացքի հանդեպ:

Այս գրույցներից հստակ երևում է, որ Սուրվյոլի «հերոսները», լինելով տարբեր քաղաքական, կրոնական ու բարոյական ուսմունքների հետևորդներ, միանշանակորեն դատապարտում են հայ ժողովրդի հանդեպ թուրքերի կատարած ոճրագործությունները: Դա նաև ռուս փիլիսոփայի անձնական դիրքորոշումն էր, անձնական խղճի գործը. ոչ մի ազգ բարոյական իրավունք չունի ոչնչացնելու ուրիշ ազգերի, ոտնահարելու ուրիշների ինքնուրույն ապրելու իրավունքը, և ոչ էլ որևէ մեծ տերություն իրավունք ունի իր պետական կամ ազգային շահերի համար ոտնահարելու առանձին ազգերի ու ժողովրդների անկախ ու ինքնուրույն ապրելու բնական իրավունքը:

С. А. ЗАКАРЯН — *Армянская тематика в произведениях Вл. Соловьева.* — В статье рассматриваются взгляды известного русского философа Вл. Соловьева относительно национального вопроса и в этом контексте его отношение к армянскому вопросу. Национальный вопрос В. Соловьев рассматривает с религиозно-этической точки зрения, критикуя эгоистическую политику больших империй. Он считает, что ни одна нация не имеет этического права уничтожать других наций, ущемлять право самостоятельной жизни других и ни одна держава не имеет право ради своих государственных и национальных интересов растоптать право самостоятельной и независимой жизни отдельных наций и народов.

Армянская тематика рассматривается в основном в произведении “Три разговора о войне, прогрессе и конце всемирной истории”, “герой” которого, будучи последователями разных политических, религиозных и этических учений, однозначно осуждают совершенные преступления турок по отношению к армянскому народу.